

Ամբաս Բիւրաս

Խմբագրութիւն «Փիիւնիկ», Ի
Աղեֆանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

1 Lr.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Ե

Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8
ԿՈՎԿԱՍ
ՏՆՆԵԿԱՆ ԲՈՂ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇՈՒԹԻ 12 ՄԱՐՏ 1902

ԹԻԻ 42

Ս. ՎԱՐԳԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Ե Ի

ՀԱՅ ՆՈՒԱԳԱԾՈՒԱՅ ԽՈՒՄԲԸ

Ամուսյա ճի հինգեաբբին՝ մին եղաւ ու պիտի մնայ փառաւոր օրերէն, որոնք եգիպտահայերուս կեանքին մէջ վերածնութեան գեղեցիկ օրջանի մը բացումը կ'աւանդեն:

Ինչպէս ամէն տարիներ, այս տարի ալ Հայոց եկեղեցին իր սովորական սրարողութիւնները կատարեց ի յիշատակ 1036 հայ նահատակներուն որոնք Աւարայրի դուշին մէջ ընկան 15 դար առաջ, կրօնի ազատութեան պատերազմը պատերազմելով:

Ժամերգութեան աւարտումին, Ազգ. Վարժարանին աւակերտները, Ս. Եկեղեցիին դասը խոնամ, իրենց ուսուցչունիները գլուխին, նոյնպէս Մանկապարտեզի մանկիկներն ալ խորանը կարգաւ շարուած. Ս. Առաջնորդը, ապաքինած, իր եպիսկոպոսական գանին

վրայ բազմած, Դասին ու Ասեանին միջեւ վարդապետներն ու քահանաները կէս շրջանակ մը կազմած, ամբողջ եկեղեցին ու վերնաստներէկտեռ բազմութեամբ մը լեփ լեցուն, լուսավառութեանց մէջ եկեղեցին շողորուն ու զուարթ, սխառ ուրիշ հանդէս մը, դպրոցական հանդէսը: Ծերերը տօնեցին Ս. Վարդանանց մեծ օրը շարականներով ու աղօթքներով. կարգը եկաւ ազգին ծաղկահասակ սերունդին:

Օրիորդ մը, հայրենասիրութեան դրուասիրն ըրաւ ո՛չ սովորական ու առնասարակ ընդունումած սահմաններովը: Վարդանանց գործը պատմեց, անցեալն ու ներկան իրարու հետ բաղդատելով:

Ճատին այն պարբերութիւնը, - որով նախնի ու ազգի հերոսներուն միջեւ նոյնութեան մը գոյութիւնը շեշտեց, սուրի հերոսներուն ու գրչի հերոսներունը, Կարմիր Վարդանինը ու օրինակի համար, Տիգրան Երկաթինը, եկեղեցին թնդաց ամբոսին որոտնդոտ ծափահարութիւններովը, թարմ ու կրակոտունջ մը հոսեցաւ. յուզեց հոգիները, դրդե-

ցուց ներքին զգացումները, զհնովցուց
ամբոխը որ ոգեւորուած ու արիւնով
լեցուած, պահ մը կարծեց ընդեմարեչ
երազուած օրուան արեւոյնսը. լաւա-
գոյն բուսկանի մը բացման յոյսը սո-
ղոսկեցաւ ամենուն արջին խորը:

Այնուհետեւ փոքրիկ աղջիկներ, յե-
տոյ աւելի փոքրիկներ, երախաներ, կար-
գաւ ելան, մին ոտանաւոր մը, միւսը
արձակ մը, արտասանեցին: *Գրիչ* ու *Սուր*
դէմ առ կեցած, սալ սրամախօսու-
թեամբ ջատագովեցին, իրաւանջիւրն
իր դերը. ի վերջոյ հաւատարմի մը կըն-
եցին, աշխարհի խաղաղութեան ու
երջանկութեան համար:

Վարժուիկներէն Տիկ. Ա.Ր.Մ.Ս.Ր.Ն.Ա.Ա.
եան բաւական երկայն ասեմաբանու-
թիւն մ'ըլաւ, որուն պարունակութիւնը
սակայն կարելի չ'եղաւ հասկնալ, այն-
քան ցած կը խօսէր համեստի Ա.Տե-
նաբանը:

Բոլոր հառերն ու արտասանու-
թիւնները յանախ կ'ընդմիջուէին ծա-
փահարութիւններով:

Ամեն մէկ արտասանութենէ ետքը
դադարի միջոցին կ'երգէին աշակեր-
տուիկները, թոյլ ու անխնամ, գրեթէ
չ'զգացուած եղանակով մը, ինչ որ հան-
դէսին միակ թերութիւնը կը կազմէր:

Այս ամենը եկեղեցիին մէջ. դուստ-
ելներն հիմակ, կանգ առնենք բակը,
ի՛նչ արտաույ ու գեղեցկօրէն հիանալի
սեսարան. *Նուագածուաց խումբը*, կի-
սաբոլոր օրջանակ մը կազմած, իրենց
իսալացի քօթ. ՈՒԿՈ ԲԻԶՈՒԱՐԵՂԼԻ Ի
առաջնորդութեամբ, բոլոր նուագա-
րաններովը, շեփօրովը, թմբակովը,
արինգովը, փողովն ու գալարափողովը
հոն եկեղեցիին բակը համախմբուած,
կը սօնէր Ա. Վարդանանց Տօնը...:

Դեռ տա՛ի մը հագիւ կայ, գոյու-
թիւն չ'ունէր այդ ընտիր խումբը, եւ
սակայն այդ խումբն է որ նոյն օրը կը
ցուցադրէ իր քանի մ'ամսուան յամառ
ու անխանջ ջանքերուն արդիւնքը: Իսա-

լական քայլերգ, *Տաշուրիկ*, *Երբ որ*
բացուի. Եւ ուրիշ հոգեպարար կտա-
ներ, մին միւսէն հրապարիչ, թովեցին
այն օրը հոն խոնած երկսեռ ամբոխին
հոգին ու սիւսը. ա'յնքան յաջողակ է-
ին նորուները, պատանիներ՝ Պոլսէն ու
գաւառներէն. Մայր-Հայրենիքի տարա-
խարհիկ ծաղիկներ, Փարաւոնի աւագ-
ները փոխադրուած, պահելով սակայն
իրենց բնիկ բոյրն ու թոյրը:

Սակայն, գիտէ՞ք, ազնիւ ընթեր-
ցողներ. որքան մաքառումներ, որքան
զրկումներ ու հսկումներ պէ՛տ էրան
այդ օրուան յաջողութիւնն ու փառքը
ձեռք բերելու համար: Հո՛ւ է բուն
խնդիրը:

Ո՛վ դուք, Եգիպտոսի մեծահարուստ
հայրենակիցներ, պահ մը ակնարկնիդ
ուղղեցէ՛ք այս Հայ Խումբին, որ, իր
սեփական ուժերովն ու միջոցներովը
պարտեաւ սակ ընկնուած, յաջողած է
այս աստիճանին բերել հասցրել ազ-
գին փառքն ու պատիւն աւելցնող ա'յն-
քան գեղեցիկ ձեռնարկ մը: Աղեքսան-
դրիոյ մէջ ունենալ Հայ Նուագածուաց
խումբ մը, հրապարակի վրայ մերք ընդ
մերթ փայլիլ մեր ցեղին գեղարուես-
տական հաւանակովը, ազգային հոգեար-
տաւ երգեր հնչեցնել սօնեաւ, հանդէս-
ներու եւ ներկայացումներու մէջ, միտ
վառ պահել հայրենիքի սէրն ու ցեղին
խանդը, օտար տարին մէջ գրաւել պատ-
ուաւոր դիրք մը. անաւասիկ Մայր-
Գաղափարը. որ ստեղծած է Հայ Նուա-
գածուաց Խումբը:

Ո՛վ որ Հայ է, ո՛վ որ ունիազգա-
յին ինքնասիրութիւն, ո՛վ որ բարեկամ
է գեղարուեստին, ո՛վ որ կ'ուզէ միտ
բարձր ու միտ յարգուած տեսնել Հայը.
մէկ խօսով, ո՛վ որ հպարտ է իր ազ-
գով, թո՛ղ փութայ քաջալերել ու ապ-
րեցնել այս գերազանցօրէն հայկական
խումբը, որ կոչուած է մասնաւոր դեր
մը կատարելու մեր Եգիպտահայ գա-

դուքին բարեբուն ազնուացման ու մտաւորական զարգացման կրկին տեսակէտներով:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ՋԱՐԴՆԵՐ. — Ամեն հայաւաս կեդրոններու մէջ, Սուլթանին պատճառակալները կամ պարզապէս իրենց տիրոջ միտքը լաւ հասկցող փորձ պէտքերը վրանին առած են ջարդերու գործը:

Արդէն 1901 Յունիսթան *Մուհամմէտ-Աղա-Պէֆիրզասէ* ու *Մահմուտ-Աղա Պոյպէկի*, 500 հրոսակներու գլուխը անցած, յարձակած էին Ալայիսի գիւղին վրայ, ուր 72 հայ ընտանիքներ կային: Հայերը կրցեր էին փախչել մօտակայ գիւղը *Քէճէրսիս*, թողլով 4 այր ու 1 կին սպաննուած, իսկ վիրաւորները փորձերու ձեռնով յօռնուած: Եկեղեցին դպրոցն ու տները տուած էին աւարի ու քանդած, շինութեանց աստղաներն ալ մօտակայ գիւղ մը փախադրած: Քանի մ'օր ետքը հրոսախուժքը նորէն յարձակած էր *Քէճէրսիս* վրայ ու 5 նոր զոհեր ըրած:

Անկէց ի վեր, Հայերը ցուած կը փորձէին նորէն դառնալ ապելու իրենց հողերուն վրայ: Մալաթիայէ հասած վերջին թղթաբերը (5 Յունուար 1902) կ'իմացնէ որ անուելի վտանգի մէջ են Հայերը:

Սէճէր աղա Չասէ Օսման Բաշա ն աւագակապետներէն *Հաճիսիյե* հեծելագունդի զօրավարութեան աստիճանին բարձրացած, վնաս է վերջնականապէս փակելու Ալայիսը, բնակիչներն ալ ջարդելու. այդ բուսակներն իսկ գիւղը չորս կողմէն պատարնուած էր Օսման բաւայի մարդիկներէն, որոնք աղբիւրը կեցած կը պահպանէին. ամեն կին կամ աղջիկ որ հոն

ասիպուած է գալ ջուր ստնելու համար, կ'առեւանգուի, կը բռնաբարուի ու կը խուսանգուի: Բոլոր պարսիք ծառերն ու այգիները փնացուցին:

Հաւանական է թէ՛ երոպական դահլիճները տեղեկացած են Ալայիսի Հայերուն ներկայ եղերական կացութեանը. բայց եթէ ջարդի դէպքը կասարուի, թերեւս չը պիտի կրնան բողոքել մինչեւ որ երկայն բարակ չը խորհրդակցին գիտնալու համար թէ *մասնակի պատկերներէն* թէ ջարդն կատարուելու են զայն. արտաքին գործնախարարի մ'առաջին պարտականութիւնն է իր խօսքերուն մէջ զգուշանալ չափացանցութիւնէ:

(Լ'ԷՍՐՕԲԷՆՆ)

Պ.Չ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԸ մտադիր է Արհեստանոց-Վարժարաններու վերածել 34 որբանոցները, որոնք կը պահէ ասիական Թուրքիոյ մէջ:

Թիֆլիզի ՄԱՅՐ-ԵՎԵՂԵՅԻՆ վերանորոգութիւնը 80000 ռուբլի արժած է, կը գրեն կովկասի հայաթերթերը: Նախաձեռնութեան ցանկին գլուխը կը գտնուի անունը *Տ. Աղեֆասեղր Մանթաշովի*, որ 30000 ռուբլի ստորագրած է:

— **ՇԱՄԱԽԻ** քաղաքը քանդուցաւ ամբողջապէս գետնաւարժէն, որ պատահեցաւ Փետր. 13ին: Հայ քաղը թուրք քաղին չափ չէ վնասուած. 2000 դիակներ հանուցանի փլատակներուն տակէն, 20000 հոգիներ անպատասխար կը գտնուին:

— **ԷՆԻՍ ԲԱՇԱՆ**, Հալէպի արիւնկրգակ վալին պիտի ետ կանչուի, ըստ ԹԱՅՄՁԻ:

ՎՇԱԿՑՈՒԹԻՒՆ. — Քաղաքի գրեթէ ամբողջ հասարակութիւնը խոր վշտի մէջ թողուց մահուան գոյժը **Տ. ՏԻՐԱՆ ԷՔԻՉԼԷՐԻ**, որ Փետր. 19ին Փա-

րիզ կը վախճանի: Հանգուցեալը ծը-
նած Իզմիր, ամուսնացած էր Օր. Սօճի
Անանօճի, այս մեծ մարդասիրին. ո-
րուն կը պարսին Թիճլիզի հայերն ի-
րենց լաւագոյն դպրոցը: Մոսկուա
կ'ապրէր ու իր հայրենասիրութեամբը
մեծ ժողովրդականութիւն կը վայելէր
հայ գաղթականութեան մէջ:

Ողբացեալի ըրած կտակներուն
մէջ կը յիշուին ի մէջ այլոց, 1000
ռուբլի Իզմիրի Մետրոպեան Վարժա-
րանին, 1000 ռուբլի Եէշի-Գուլէի
Ազգ. Հիւանդանոցին, եւ 200 ռուբլի
ալ մեր մեծանուն եղբայրակից Լ'ԱՐ-
Մէնիի Տ. Տնօրէնին:

ՓիիՆԻԿի խմբագրութիւնը պարսֆ
կ'զգայ իր խորին վճակցութեան ար-
տայայտութիւնները միացնելու ընդհա-
նուր ցաւակցութեան անկեղծ զգացում-
ներուն հետք տեղիս Հայ գաղթակա-
նութեան որ երախտապա՛ս է ողբաց-
եալի եղբայր եւ Նախկին Թաղ. Խոր-
հրդոյ Փոխ-Ասենապետ Ազն. Տ. ՀԱՅԿ
ԷՔԻՉԼԷՐԻ, գաղթականութեան հո-
սանքի քշանին՝ իր մասուցած անմո-
ռանալի ծառայութեանց համար: Հան-
գուցեալը կը թողու անմխիթար այրի
մը, եւ հաստատուն կրթութիւն ստացած
ու հօրը մարդասիրական զգացումները
ծառանգող որդի մը. Տ. ՅԱԿՈՒԷ Է-
ՔԻՉԼԷՐ, հարսարապետ երկրաչափ:



ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆ. — Ուրախու-
թեամբ կի նշանակենք ՄԵՄ.Տ. ԳԱՌՆԻԿ
ՍԷԼՎԱՃԵԱՆԻ ընդ ԱԶՆ. ՕՐ. ԱՐՄ.ՔՍԻ
Ս. ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻ նշանախօսութիւնը,
որ տեղի ունեցաւ ամսոյս 9 ին Կիրա-
կի օրը:

Տիար Գառնիկ Սելվանեան, հա-
մակրելի երիտասարդը, ծանօթ է Ե-
զիպատահայ հասարակութեան իր բռնած
պատուաւոր դիրքովը Գանիրէի առե-
տական հրապարակին մէջ, եւ ցոյց
տուած եռանդուն գործունէութեամբը

մեր ազգային բարենպասակ հաստա-
տութեանց մէջ: Իսկ Օր. Սօճի պար-
կեցասուն ու զարգացած դուստրն է
Տիար Սահակ Աբրահամեանի, որ տե-
ղիս հայ գաղթականութեան մէջ յար-
գուած, սիրուած գերդասանի մը հայ-
րըն է:

Մեր անկեղծ խնդակցութիւնները
խօսեցեալներուն ու իրենց պարագա-
ներուն:

ՉԻՉԻՆԵԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄը տե-
ղի ունեցեր է ամսոյս 5 ին չորեքաբթի
իրիկունը. կ'իմանանք թէ՛ բաւական
փայլուն անցած է ու հասութաբեր ե-
ղած: Կ'իմանանք ըսինք, որովհետեւ
չը տեսանք, շնորհիւ Կարգադիր յանձ-
նախումբին, որուն անդամներուն օտա-
րամոլութիւնն ու կոյր կողմնակալու-
թեան ոգին այնքան վսանգալիօրէն
զարգացած են որ, Հայ Աղիտաստիւնամի
նպաստին տրուած ներկայացման մը չ'են
կրցած, կամ աւելի նիւթը, չ'են հան-
դուրժած հրաւիրելու Հայ Խմբագիր մը,
Աղեփանգրիա հրատարակուող միայ
հայ թերթի մը խմբագիրը, մինչդեռ, օ-
տար մամուլին ներկայացուցիչներուն
տրամադրութեան տակ չ'են մոռցած դը-
նելու թիկնաթռուներ: Մենք այս իրո-
ղութիւնը կը հրապարակենք, զգացնե-
լու համար ժողովուրդին որ չը շլանայ
այդ շողոզուն սիտոսակիրներէն որոնք
անուններ են միայն, ու եւ է ազգային
նշանակութենէ զուրկ: Այդպիսի մար-
դիկ, յարմարագոյն միջնորդներ կրնան
ըլլալ մեր ու օտարին միջեւ, իրենց
անախտութեան ուժովը: Օտարամո-
լութիւնը, հակառակ հասութաբերու-
թեանը, չէ՛ սակայն յասկոթիւնը, որ
կը պահանջուի ազգ. գործերը վարե-
լու կոչուած ժողովականէ մը:

Աղիտաստիւնամի արկղը քանի մը
ոսկի աւելի մտցնելով չէ՛ որ պիտի
արժանանաւ մեր փուկներուն, պարո՛ն
օտարամոլներ:

Վարժուեցէ՛ք նախ յարգելու ազ-

զը, որուն այսպէս կամ այնպէս, զաւակը լինելու բախտին հանդիպած էք: Չի՞նք տեսնուի ներկայացումին տեղական հայ հրապարակագիր մը չը հրատարակուի՞ յո՞վ՝ տխուր ապացոյցը կուտայ մեր անուղղայ ազգասեցութեան:

ՀՐԱԻԷՐ ԶԻՆԱԴՈՒԼԻ վերնագրով սպագրուած կոչ մը ստացանք Տ. Կ. Թումանյանէ, ուղղուած Արսասահմանի խմբագրութեանց առ հասարակ, պարստելով կարգ մը թերթերու մէջ հիւրընկալուած զգեղ յօդուածները, ու նոյն իսկ խմբագիրներուն գործածած անհաղափար ու անարգական ոճով լեզուն ու բառերը:


Գեղեցիկ ու հետեւելի գաղափար այս գաղափարը. սակայն, դժբաղդաբար, արսասահմանի թերթերէն մեծագոյն մասը, նոյն ողբալի դրութեան մէջ ինկած, կարծես թէ իրենց թերթերուն յարաստութեան միակ պայման ընտրած են այս ու այն գործիչի գրչիւնը քափել անարգ գրպարտութիւններ

Արսանց կը մաղթենք որ ԶԻՆԱԴՈՒԼԻ ՀՐԱԻԷՐ ր զսնէ փափագուած ընդունելութիւնը, մաքրագործուի հրապարակագրութիւնը, ժողովուրդը փաշտութիւնն ունենայ արհամարհելու հրապարակագրի անուան ճակ ապաստանած դիմակաւորներն ու հացկասակները:

Մենք շատ կը փափագէինք այս ՀՐԱԻԷՐԸ նոյնութեամբ արագրել ՓԻԻՆԻԿԻ մէջ, բայց կը ցախինք որ նիւթերու առատութեան ու տեղին անձկութեան պատճառովը պարտաւորեցանք այս հակիրճ տղերու մէջ ամփոփել մեր փափագը:

Կը ձայնակցինք Տ. Կ. Թումանյանի Զինագրուի կոչին ու կը յուսանք թէ քիչ ատենէն բարեւար ու փրկարար արդիւնք պիտի տեսնուի Արսասահմանի հրապարակագրութեան մէջ:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԹԱՂԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Աղեքսանդրիացի Հայե՛ր, վճռական ըրպէի մը հանդէպ կը գտնուինք, որուն նշանակութիւնը սովորաբար կարծուածէն շատ աւելի մեծ եւ ծանրակշիռ է. խնդիրը պարզապէս Թաղական կորուստը մ'ընտրելու մը գործը չէ, որ ամենէն աննշան Թաղի մը մէջ ալ տեղի կուսենայ ամէն չորս տարին անգամ մը: Անո՛նք որ այսպէս կը կարծեն, շատ թեթեւօրէն կը ըմբռնեն պայտարը որ կը մղուի մօտաւորապէս տարիէ մը ի վեր եւ որուն ամենէն սուր, ամենէն տենդոտ ըրպէն է ներկայ վայրկեանը. այս սուղ, այս թանկագին ըրպէին մենէ իւրաքանչիւրին բո՛ւ ած դիրքէն կախում ունին ազգային կենսական շահեր: Անցեալին վրայ վեր ի վերոյ ակնարկ մը բաւական է այդ շահերու մեծութիւնը եւ մեր ամենուս վրայ ապագային ծանրանալիք պատասխանատուութեան չափը ճշդելու համար:

«Փիւնիկ» ի ընթերցողները, Աղեքսանդրիացիներու մեծամասնութիւնը, գիտեն թէ պայտարին նպատակը եղած է ձեռք բերել կամայականութեանց բարձումը, բռնաբարուած օրէնքին գործադրութիւնը, տեղական ազգային գործերու բարեօք ղեկավարութիւնը՝ օրէնքին գծած երաշխաւորութիւններով: Այս օրինակով նպատակը՝ որ ամէն ինքնաձանաչ հայու բաղձանքն է, բաղիւնցաւ բուն ընդդիմութեան. իրաց արդի խառնաշփոթ վիճակէն այս կամ այն կերպով օգուտ քաղող կարգ մը անձեր ոգի ի բոլին աշխատեցան խափանելու այս նպատակը. առժամապէս իշխանութեան վրայ գտնուողները իրենց դիրքը ամուր պահելու համար դիմեցին ամէն միջոցի, արհամարհեցին ժողովուրդը, մինչեւ անգամ սպառնալիքներ տեղացուցին անոր գլխուն՝ օգին մէջ սուր շողացնելով (ՉՄՈՒՆԱՆՔ ՍԵՊՏ. 1 Ի ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ): Ստախոսութիւնը, կեղծիքը, իմաստակութիւնը, ամէն միջոց գործածուեցան միամիտ ժողովուրդը խաբելու եւ իրերու գրութիւնը անփոփոխ պահելու համար. ո՞վ չի յիշեր, օրինակ, «ՆԻԼ» ի առասպելը, Հակահանրագիրը, եւ մինչեւ անգամ մեր Սրբազան Ա.

առջնորդին արտասանած **ԽԱՉԻ ՃԱՌԸ...**
 ո՞վ չի յիշեր վարժարանին շուրջը դարձած
 գայթակղական խնդիրները որոնք քիչ մը-
 նաց դատարաններու առջև ալ պիտի պար-
 զուէին — ու վեռ այդ վտանգը բոլորովին
 անցած չէ՝ — մեր ազգը օտարներու առջև
 ալ խայտառակելու համար: Սահմանադրու-
 թեան պաշտպանները սակայն գիտցան մնալ
 իրենց ստանձնած դատին բարձրութեանը
 վրայ. հակառակորդներու սուտերը եւ ապօ-
 բինութիւնները նշաւակեցին ու մատնանիչ
 ըրին ընդհանուրին, պապանձեցուցին կոր-
 սուած դատի մը անձարակ պաշտպանները,
 որոնք սակայն բոլորովին զինաթափ չե-
 ղան, այլ այնուհետեւ սկսան մութի մէջ
 կատարել իրենց դերը՝ ցերեկի լոյսէն
 փախչող, չղջիկներու եւ գերեզմանա-
 կրկիտ բորենիներու նման: Մեծ անձնաւո-
 ռութիւն մը միայն, Ն. Վսեմութիւն Պօղոս
 Փաշա Նուպար, արժանացաւ ժողովրդի կա-
 տարեալ վստահութեան եւ անհուն երախ-
 տագրութեան, երբ իր հեղինակաւոր մի-
 ջանտութեամբ ուղեց վերջ մը դնել գայ-
 թակղութեան. Ն. Վսեմութիւնը չ'վարա-
 նեցաւ ճշմարտութիւնը, իրականութիւնը
 անվերապահ կերպով յայտարարել. բնական
 էր որ իր անժամէութիւնը ուրացող
 Թաղ. Խորհուրդիս, որը սակայն «Ն. Վսե-
 մութեան էր կարգուած եւ անկէ ստացած
 իր իրաւասութիւնը ինքզինք յարգելի ըն-
 ծայելու», նոյն այդ յայտարարութեան
 առջեւ փի բերան մնաց, ու ԻՆՎԱԻ: Այո՛,
 ինչպէս որ 1899ի Թաղ. Խորհուրդը ԼՈՒՄ-
 ՈՒՆԵԱԻ, նոյնպէս ալ Օթէլ Խտիվիալի մէջ
 ծնած եւ նախորդին յաջորդած Աւժամեայ
 Խորհուրդը ԻՆՎԱԻ, եւ ոչ թէ հրատարեցաւ
 իր ազատ կամֆոլը:

Չ'մոռնանք ուրեմն թէ հիմա մեր առ-
 ջև ներկայացող խնդիրն է ինկած հսկա-
 սահմանադրական անժամեայ Թաղ. Խոր-
 հուրդին տեղ ընտրել նոր, սահմանադրա-
 կան Թաղ. Խորհուրդ մը. Խորհուրդ մը որ
 այս անգամ ճշմարտապէս սահմանադրական
 ըլլայ, ինչպէս իր կազմութեամբ նոյնպէս
 իր ոգիովը: Ժողովրդի քուէներով ընա-
 ռուած Խորհուրդ մը իր կազմութեամբ
 սահմանադրական կրնայ համարուել, բայց
 իր ոգիով ալ սահմանադրական ըլլալու
 համար էական պայման մը կայ. Թաղական
 ընտրողները օրէնքը յարգող, Սահմանա-
 դրութիւնը սիրող անձեր ըլլալու են: Ին-
 քած Խորհուրդը ճիշդ այս անհրաժեշտ պայ-

մանը իր մէջ չ'ներկայացնելուն համար էր
 որ ինկաւ. անոր անդամները, գրեթէ ամ-
 բողջութեամբ, բաց ի Ն. Վսեմութիւն Պօ-
 ղոս Փաշայէն, օրէնքը, սահմանադրութիւնը
 ժողովրդին կամքը արհամարհեցին, անոնք,
 անոնց արբանեակները ասէին անդին յայ-
 տարարեցին ալ թէ՛ Սահմանադրութիւնը
 այս երկրին համար չէ, այստեղ չի կրնար
 գործադրուել: Այդպիսիները, եթէ երբէք
 վերընտրուին, ի՞նչ երաշխաւարութիւն
 կրնան ընծայել թէ յանկարծ պիտի մոռ-
 նան իրենց անցեալ գործերը, անցեալ յու-
 ւակնասութիւնները, իրենց աւանդու-
 թիւնները ժողովրդի հանդէպ իրենց
 բռնած արհամարհոս ու յոխորտացող գիրքը
 ու ասկէ վերջ օրինասէր դառնան:

Ահա այս տեսակէտով նախորդները
 ժողովրդին վստահութիւն չ'են ներշնչեր,
 մանաւանդ ներկայ շրջանին երբ մեր բըռ-
 նարարուած եւ այսքան դժուարութեամբ
 ձեռք բերուած սահմանադրական իրաւունդ-
 ները մի անգամ ընդ միշտ ամուր հիմերու
 վրայ հաստատուելու հարկը կը ներկայանայ.
 Ի՞նչպէս կրնանք մեր շահերը յանձնել օրէն-
 քը հեզոտ, իրենց կամայականութիւնները
 մեր վրայ իբր օրէնք գնող անձերու ձեռքը:
 Եւ սակայն եկէք տեսէք որ, անցեալին
 տխուր գերակատարներէն ոմանք, ժողո-
 վրդին մէջ մտած ամեն ջանք ի գործ կը
 դնեն քուէներ մուշալու ցանկի մը հա-
 մար, որը իր մէջ կը պարունակէ ինկած
 Խորհրդին անդամներուն գրեթէ ամբողջու-
 թիւնը: Ասոնք ժողովուրդին կրտսն ի՞նչ որ
 հակահակադրուող ստորագրել տուած ժա-
 մանակ ըսին. Աղեքսանդրիոյ մէջ այդ եօ-
 թը անձէն զատ արժանաւոր ընտրելի չկայ
 եղեր, անոնք միայն օտարներու առջև հա-
 մարում կը վայելին եղեր. անոնք իրենց
 հարստութիւնը ազգին պիտի կտակեն եղեր,
 ուրիշները ազգին դրամները պիտի ուտեն
 եղեր եւն եւն, իսկ իւրաքանչիւր անհատին
 ալ իր գիրքին ու պէտքերուն համաձայն
 կը շտայլեն խոտուսներ, ոմանց ՄԱՆԱՐԱՆԻ
 մէջ գործ պիտի տան, ոմանց պաշտօն պի-
 տի գտնան, ոմանց համադրեալ պիտի շինեն
 եւն եւն: Շատ մը անարժան միջոցներ ալ
 կը գործադրեն որոնք իրենց կարգին պիտի
 յիշե՛ք: Այստեղ բաւականանանք յիշել
 միայն մէկ քանին:

Ինկած Խորհուրդը եւ ինկած քարտու-
 դարը, ինչպէս սովորութիւն է, մինչեւ ի-
 րենց յաջորդներուն գալը առաջնորդարանի

գործերէն բոլորովին քաշուած չըլլալով՝ օգուտ կը քաղեն իրենց ներկայ գիրքէն ժողովրդին վրայ ազդեցութիւն բանեցնելու, ընտրական գործողութիւնները իրենց ար- պաստաւոր պայմաններու մէջ մտցնելու համար: Այսպէս, Ընտրողական ժողովի բա- ցարձակ մեծամասնութիւնը իրենց արբան- եակներէն կազմեցին. ընտրողներու կաս- կածելի ցանկի մը վրայ ջանացին շուտով ընտրութիւնները կատարել. հրաւիրա- գիրքները եւ քուէթուղթերը չբաժնեցին Առաջնորդարանի սպասաւորին միջոցաւ, ինչպէս որ պէտք էր կողմնակալութեան ո եւ է կասկածի տեղի չի տալու համար, այլ իրենց կուսակից այնպիսի մարդերով որոնք հասցէտէրերուն վրայ կրնային ազ- դեցութիւն բանեցնել: Ընտրողական ժողովի նամակներուն եւ քուէթղթերու տեղիներէն մէկ քանին յիշենք. Տիար Գ. Իփէքեանի եւ Տիար Արիստակէս Ղազարեանի խանութ- ները, ինչպէս քարտուղար Տիար Լեւոն Մկրտիչեանի եւ հակահանրագրի հերոսնե- րէն Հաճի Նշան Ճէպէճեանի նեպերը, չի- շելու համար Սիոակ Պողոսեանը, Յարու- թիւն Վէշիշեանը, Կարապետ ժամկոչեանը եւ ուրիշներ: Առաջնորդարանի պաշտօնական նամակները ցրուելու այս անօրինակ կեր- պը մանաւանդ աչքի կը զարնէ երբ բանք թէ քանի քանի անգամներ սոսկականներու մահազոյները ցրուել արուած են առաջնոր- դարանի սպասաւորին ձեռքովը. իսկ հիմա որ ընտրութեան հրաւիրագիր կը զրկուի, սոսկականներու կը յանձնեն, եւ այն ալ ոչ թէ չէզոք անձերու այլ իրենց կուսա- կիցներուն:

Հրաւիրագիրներու մէկ մասը արդէն ցրուած է, մէկ մեծ մասը տակաւին կը մնան. միւս կողմէ ասոր անոր կը յայտա- րարեն թէ «եթէ հրաւիրագիր չըստանաք ալ, քուէ կրնաք տալ»: Աւ այս խառ- նափշոթ վիճակէն օգտուելով՝ վերը յիշուած անձերը եւ իրենց արբանեակները ու վարձկանները ժողովրդին ամենէն տգէտ խաւերուն մէջ կը մտնեն ու խորհութեամբ կամ տեսակ տեսակ միջոցներով քուէ կը հաւաքեն, ինչպէս որ կը վկայեն հետզհետէ Առաջնորդարան եւ «Փիւնիկի» խմբագրա- տունը տեղացող բողոքները:

Այս ամէնը պարզելով՝ առ այժմ կը քաւականանամ ժողովուրդը հրաւիրել որ աչքը բանայ ու չի խաբուի. գիտնայ իր ձայնին ու իր քուէին կարեւորութիւնը

գէթ այն բանէն որ հպարտ ամբարտաւան մարդեր որոնք մինչև հիմա զինք կարհա- մարհէին, իր դուռը ափ առած են՝ իրմէ քուէ մուրալու համար: Ամէն մարդ պէտք է խոր- հի, հարցնէ, փնտռէ, լուսաւորուի, որոշ համոզում գոյացնէ, ու անկէ վերջը տայ իր քուէն. ասով միայն կատարած կըլլայ իր քաղաքացիական պարտականութիւնը եւ հաստատած թէ՛ արժանի է ունենալու սահ- մանադրական մարմին մը եւ ազատուելու բռնարարիչներու կամայականութիւննե- րէն:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏ. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԿԷՆ Կը խնդրուի բացատրել թէ.

Ա. ՈՐ ՕՐԷՆՔՈՎ որոշուեր է որ ընտրողաց ցանկէն դուրս թողուած ազգայինները (200էն ԱԻԵԼԻ եղան մինչև այսօր) ի- բաւունք չսխտի ունենան ար- ձանագրուիլ վաղուրնէ (հինգ- շաբթի) վերջը.

Բ. Ինչո՞ւ ընտրութեանց յե- տաձգումը պաշտօնապէս չգե- կուցուեցաւ:

ԸՆՏՐՈՂ ՄԸ

— ԽԱՉՈ-ՉԱՆԻ թմ դիմակցու- թիւնը, Գահիրէի Գալստեան վարժարանին վերջին դէպքե- րուն վրայ, ստիպուեցանք յե- տաձգել այս շաբթուան Գ. Յա- ւելուածին:

Ա. Զ. Դ

— ՆՈՐ ԴԱՐԻ ճաշարանին մէջ Իփէքե- անի վաճառասան գիմացը, ամսոյս 16 ին կիրակի օրը պիտի քաշուի Այրի Հայաս- տանին մեղաքահիւս պատկերին վիճակա- հանութիւնը:

Հրաւիրեալ են բոլոր անոնք որ այդ վիճակահանութեան ստոյսակներէն գնած են:

ՄՏԻՊՈՂԱԿԱՆ

ՓԻԻՆԻԿԻ Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ լրանալու մաս է, բայց եզրագոտի ու Արտասահմանի մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն ու առարուժը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագրիւնը ՄԱՆՃԱՔՕՍԹՈՎ, մեր հասցէին.

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ Հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ,

ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆՆԵՐՈՎ:

ԿԱՐԵԻՈՐ Ա.ՁԳ.

Միաց. Նահանգներուն Ուստորը քաղաքէն Հայրենակից մը մտադիր ըլլալով Հայերէնի թարգմանել տալ արաբերէն գիրք մը, կը փնտռէ այդ երկու լեզուներուն հաւասարապէս հմուտ եղող անձ մը, որուն թարգմանչութիւնը բնականաբար սլետի վարձատրուի:

Գիմել Փիլինիկի խմբագրատունը. նամակ գրկել թերթիս հասցէին՝

S. Burat, Rédaction Punig,
Alexandrie (Egypte)

ՏՕԴԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ

Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ, մասնաւորապէս կը դարմանէ ջղային սկարուրիւններ ելեկրականութեամբ, նաեւ կուրծքի, եւ ներքին գործարանաց հիւանդութիւնները: Աղբասներուն կը նայի ձրիաբար: Առ այժմ կը բնակի «Rue el Caied Gobar» անուն փողոցին մէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի խանութին մօտ: Ժամերը 10-11 կէս օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգքօրը նաեւ օտարալեզու ուսումնասիրութեամբ լիովին համոզուած ըլլալով թէ կարելի է առաջուրնէ որսել սեռի տեսակը ըստ կամսայն ծնողք որ ու եւ է պատկանու հախամեծար կը համարին մանչ կամ աղջիկ գաւակ ունենալ, իրենք թէ՛ անձամբ եւ թէ՛ նամակաւ իրեն դիմել եւ այդ մասին ձեռք առած ամենապարզ եւ միանգամայն ամենագոհացուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայմանները դիրամասչելի են, եւ վարձատրութիւն չի պիտի պահանջուի ակնկալուած արդիւնքը երեսն գալէ առաջ:

Նամակները պէտք է բովանդակեն նամակագրուձ, եւ ուղղուին հետեւեալ հասցէին. Dr. S. V. Ezekielian, Post. Restante, Alexandrie (Egypte):

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ ԿԱԶԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉՔ Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսլի հայ տուններուն ծանօթ յանախօրդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն. Յանձնարարութիւն խնամով կը կատարուին:

Գիմել, Աղղարիւն, Ռիւէլ-էլ-Չախապի,
Attarine Ruelle-el - Zababy